2026, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (702)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք հղում համայն մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս՝ Հանրապետության տոնի առիթով:

Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրումը նշանավորելով՝ հիշում ենք Սարդարապատի, Ղարաքիլիսայի ու Բաշ Ապարանի հերոսամարտերը: Այդ պատմական գոյամարտերում վճռորոշ դերակատարություն ունեցավ Ամենայն Հայոց Գևորգ Հինգերորդ Կաթողիկոսը: Կենաց-մահու պայքարում մեր ժողովրդի քաջարի զավակները՝ այդ թվում մեր Սուրբ Եկեղեցու հոգևորականները, հաղթանակ տարան և սերունդների համար ապահովեցին հարազատ հողում անկախ ու ազատ ապրելու արդար իրավունքը: Նույն անվեհեր ոգով ազգիս նվիրյալ զավակները նոր ժամանակներում անձնվիրաբար պաշտպանեցին երկիր հայրենին, շատերն իրենց անգին կյանքը զոհեցին մեր պետականության անսասանության և անվտանգ ու արժանապատիվ ապագայի համար: Այսօր մենք ազգովի գլուխ ենք խոնարհում մեր հերոսների առջև և անմար պահում նրանց լուսավոր հիշատակը մեր սրտերում:

Ներկա բարդ ժամանակներում, արտաքին ու ներքին մարտահրավերներին հանդիման, պիտի միաբանվենք և միասնաբար հզորացնենք մեր պետությունը, ծաղկուն ու շեն դարձնենք համայն հայոց կյանքը:

Թող Բարձրյալ Տերը առատապես օրհնի և հաստատուն պահի մեր երկիրն ու քրիստոնասեր մեր ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս այսօր և միշտ. ամեն:

Գերագույն հոգևոր խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ

Մայիսի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը:

Ժողովի օրակարգում ընդգրկված էին Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարմանը, երկրի առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերներին, հակաեկեղեցական արշավին, ապօրինաբար ազատազրկված եկեղեցականների և մյուս հայորդիների նկատմամբ ընթացող իրավական գործընթացներին, կիրակնօրյա դպրոցների դասագրքերի պատրաստման ուղենիշներին, ՀՀ Զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում իշխանության նախաձեռնությամբ հոգևոր ծառայության դադարեցմանն առնչվող հարցեր:

Օրակարգային հարցերի շրջանակում ԳՀԽ-ն անդրադարձավ նաև ԵԽԽՎ նախընտրական պատվիրակության՝ մայիսի 13-ին հրապարակած միջանկյալ հայտարարությանը, ՀՀ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ երկրում ստեղծված մտահոգիչ իրավիճակին և նախընտրական շրջանում արձանագրված դատապարտելի երևույթներին, որոնց առնչությամբ հանդես եկավ հայտարարությամբ.

«Գերագույն հոգևոր խորհուրդը խորապես մտահոգված է ՀՀ առաջիկա խորհրդարանական ընտրությունների նախաշեմին քարոզարշավի ընթացքում քարոզչական անընդունելի միջոցների, այդ թվում՝ բռնաճնշումների, ոչ իրավաչափ ուժի կիրառման առնչությամբ: Տեղ գտնող թշնամանքի ու ատելության խոսույթը, անվայելուչ և անպարկեշտ բառապաշարը միմիայն պառակտում և առավել բևեռացնում են մեր հասարակությանը՝ ժողովրդի մեջ առաջ բերելով ընդվզում, հիասթափություն և նոր լարվածություն, նաև լրջագույն սպառնալիքներ ստեղծելով հայոց պետականության համար:

Անթույլատրելի և դատապարտելի ենք նկատում հանուն քաղաքական սեփական նկրտումների՝ եկեղեցու և եկեղեցականության թիրախավորման քայլերը, ինչպես և Հայոց Եկեղեցին քաղաքական գործընթացների մեջ արհեստականորեն ներքաշելու փորձերը:

Այս լույսի ներքո խիստ տարակուսելի է ԵԽԽՎ նախընտրական պատվիրակության՝ մայիսի 13-ի միջանկյալ հայտարարության մեջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «քաղաքականության մեջ աննախադեպ ներգրավվածության» վերաբերյալ արձանագրված գնահատականը, որը նկատում ենք ապատեղեկատվությամբ ուղղորդյալ և ամբողջովին հակասող ԵԽԽՎ 2026 թ. հունվարի 25-ի թիվ 2633 (2026) բանաձևին:

Փոխարենը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ԵԽԽՎ-ից ակնկալում է հստակ գնահատականներ Հայաստանում Հայոց Եկեղեցու դեմ իշխանությունների սանձազերծած արշավի, հակառակ երկրի օրենսդրական կարգավորումների և միջազգային իրավունքի՝ պետական լծակների բացահայտ գործադրմամբ շարունակաբար դրվող արգելքների և սահմանափակումների առնչությամբ, որոնք ուղղակի խոչընդոտներ են հարուցում Եկեղեցու հոգեխնամ առաքելության մեջ: Հասցեական արձագանքի են կարոտ անօրինական այնպիսի գործողությունները, ինչպիսիք են՝ հարկադրանքի միջոցներով և սպառնալիքներով եկեղեցականների վրա ներազդելու, մի շարք հոգևորականների նկատմամբ ապօրինի քրեական վարույթներ նախաձեռնելու, եկեղեցական կանոնակարգից շեղված հոգևորականներին խրախուսելու, առանձին քահանաների հետ ապօրինի աշխատանքային պայմանագրեր կնքելու, իսկ կարգալույծներին պետական հովանավորմամբ հոգևոր ծառայության նշանակելու դատապարտելի դեպքերը, որոնք ուղղակիորեն ոտնահարում են ինչպես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, այնպես և մարդու հիմնարար ազատություններն ու իրավունքները:

Միջազգային պատկան կառույցների և իրավապաշտպան կազմակերպությունների արդարամիտ արձագանքի են սպասում նաև աշխարհասփյուռ Հայոց Եկեղեցու ինքնակառավարմանը միջամտելու՝ իշխող քաղաքական ուժի հակահրավական գործողությունները և հատկապես՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրում Եկեղեցու ազգընտիր Հայրապետի գահընկեցության ճանապարհով Եկեղեցու «բարենորոգման» մասին արձանագրված հավակնությունները. մի քայլ, որ ևս հակականոնական է և հակաօրինական:

Գերագույն հոգևոր խորհուրդը հարկ է նկատում վերստին արձանագրել, որ Եկեղեցուց և եկեղեցական իրավասու մարմիններից դուրս որևէ կառույց՝ անգամ պետական ու քաղաքական իշխանությամբ օժտված, չի կարող իրականացնել եկեղեցական կյանքի «բարենորոգում»:

Ընտրությունների արդյունքում ժողովրդի շնորհած վստահության քվեն բացառապես կարող է օգտագործվել պետական ինքնիշխանությունն ամրապնդելու, երկրի սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու, ազգային ինքնությունը զորացնելու և հանրային համերաշխությունը վերականգնելու համար:

Հայոց պետությունն իր ազգակերտ առաքելությամբ բոլոր ժամանակներում եղել է ամուր պատվարը մեր ինքնության, խարիսխը մեր հարատևության: Հայոց անկախ պետականությունը պետք է խոհեմությամբ, նվիրումով ու նախանձախնդրությամբ փայփայել և արկածախնդրություններով երբևէ վտանգի չենթարկել:

Թող երկնավոր Տերը մշտամնա Իր օրհնության ներքո խաղաղության ու անվտանգության մեջ պահի երկիրը Հայոց և Իր լույս պատվիրաններով համայն հայ ժողովրդին առաջնորդի միմիայն աստվածահաճո, հայրենաշեն և ազգօգուտ շավիղներով»:

Հանրապետական մաղթանք և այց Սարդարապատի հուշահամալիր Հանրապետության տոնի առիթով

Մայիսի 28-ին՝ Հանրապետության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում կատարվեց Հանրապետական մաղթանք: Հոգևորականաց դասը և ներկա ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Հայաստանի Հանրապետության անսասանության, խաղաղ ու անվտանգ կյանքի համար:

Նույն օրը Նորին Սրբություն Գարեգին երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Սարդարապատի հուշահամալիր: Հուշակոթողի առջև ծաղկեպսակ զետեղելուց հետո հոգևորականաց դասը՝ Հայոց Հայրապետի գլխավորությամբ, աղոթք բարձրացրեց առ Աստված՝ մայիսյան հերոսամարտերում նահատակված քաջարի հայորդիների հոգիների հանգստության համար:



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Արարատյան շաբաթվա առիթով

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք ձեզ հայրապետական Մեր օրհնությունը, սերն ու բարեմաղթանքները:

Փառաբանական աղոթքով առ Բարձրյալն Աստված հունիսի 1-ին մուտք ենք գործում Արարատյան տոների շաբաթ, որն առանձնահատուկ կարևորություն ունի ազգային-եկեղեցական մեր կյանքում: Հանդիսավոր թափորներով և Սուրբ Պատարագների արարողություններով, երկրպագության նպատակով սրբերի մասունքների դուրս բերմամբ հիշատակելու ենք Սուրբ Հռիփսիմյանց ու Գայանյանց կույսերի մարտիրոսությունը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից, Հայոց մեծ դարձը և Տրդատ արքայի հրովարտակով Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումը: Արարատյան շաբաթվա ավարտին՝ հունիսի 7-ին, նշելու ենք տոնը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի, որը մեր խոյացավ հայոց հողի վրա 1725 տարի առաջ Աստվածորդու լուսավոր էջքով:

Պատմական այս իրադարձություններով, Սուրբ Էջմիածնով հայոց ազգը արժանացավ Աստծո ընտրյալ ժողովուրդ լինելու երկնային շնորհին, քրիստոնեական արժեհամակարգը դարձավ ամրակուռ հիմքն ու առանցքը մեր լինելության ու հարատևության՝ համապատասխան սուրբգրային վկայության. «Դուք ընտիր ցեղ եք, թագավորություն, քահանայություն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ» (Ա Պետ. 2.9): Սուրբ Էջմիածինը հավերժական խորհրդով եղել է աշխարհասփյուռ իր զավակների հավատքը զորացնողը, հույսն առատացնողը, քրիստոսանվեր ու հայրենանվեր կյանքի երաշխիքը, օրհասական պահերին հանձնառու եղել ամեն զոհողության՝ հանուն իր խնամքին հանձնված հոտի: Սուրբ Էջմիածինը կրթական, մշակութային, հոգեմտավոր մեծագույն նվաճումների ներշնչարանն ու գրավականն է, անխորտակելի ամրոցը մեր ազգային ու հոգևոր ինքնության և առհավատյան հոգևոր ժառանգության և պատմական հիշողության անխաթար պահպանության: Սուրբ Էջմիածինը, ծանր փորձությունների միջով անցնելով, մնացել է աննկուն ու անխորտակելի՝ մշտապես լինելով անլռելի ու բարձրահունչ կոչնակը ազգի ու հայրենյաց շահերի և մեր ժողովրդի միաբանության: Սուրբ Էջմիածնի հիմնադրման տոնակատարումը, սիրելիներ՛ն, ամենքիս համար առիթ է՝ վերստին վկայելու մեր սերն ու անդավաճան հավատարմությունը հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին և քրիստոսահաստատ հայոց հոգևոր կենտրոն Սուրբ Էջմիածինը՝ համաձայն սաղմոսերգուի խոսքի. «Տե՛ր, սիրեցի Քո տան վայելչությունը և Քո փառքի բնակության վայրը» (Սաղմ. 25.8):

Սուրբ Էջմիածնի տոնն այս օրերին, ցավոք, նշելու ենք մի իրավիճակում, երբ ծանր կորուստները խռովել են մեր ժողովրդի անդորրը, երբ հարվածներ են հասցվում մեր ժողովրդի ինքնության հիմքերին, աղճատվում հոգևոր և ազգային սրբազան խորհրդանիշերը: Սուրբ Էջմիածնի տոնը նշելու ենք խորապես մտահոգող պայմաններում. պառակտված է մեր հասարակությունը, հայրենական անդաստանում սերմանվում են ատելություն, թշնամանք, անհանդուրժողություն ու անարդարություն, և իշխանությունների միջամտությամբ խեղվում են Եկեղեցու դարավոր կանոնակարգերը, հետապնդումների ու բռնաճնշումների են ենթարկվում մեր Սուրբ Եկեղեցին և եկեղեցասեր անձինք: Այս դժվարին իրադրության մեջ Սուրբ Էջմիածնի լուսեղեն խորհուրդը մշտաբարբաս հրավեր է մեզ՝ ամուր կառչած մնալու քրիստոնեական մեր հավատքին, վերագտնելու ազգային ոգու տոկունությունը, հաղթահարելու նեղրազգային բաժանումները, բժշկելու վերքերը և վերականգնելու մեր ժողովրդի ներքին խաղաղությունն ու անդորրը:

Հունիսի 7-ին՝ Սուրբ Էջմիածնի տոնի նվիրական օրը, մեր երկրում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրությունները: Հայրապետիս հորդորն է ամենքիդ անխտիր առաջիկա կիրակի մասնակցել ընտրություններին՝ ազգի և հայրենիքի շահերի բարձր գիտակցությամբ, լուսավոր գալիքի տեսիլքով և սերունդների նկատմամբ պատասխանատվությամբ, որպեսզի մեր երկրում գերակայի օրենքը, հարգվեն մարդու իրավունքներն ու արժանապատվությունը, տիրապետեն արդարությունն ու ճշմարտությունը, սերն ու համերաշխությունը և փոխադարձ հարգանքը՝ «ղե՛ն զգելով ամեն չարություն, ամեն նենգություն, կեղծավորություններ, նախանձ և ամեն չարախոսություն»,– ինչպես պատգամում է առաքյալը (Ա Պետ. 2.1):

Կոչ ենք անում քաղաքական ուժերին զերծ լինել ատելության խոսքից, դրսևորել զգոնություն ու շրջահայացություն և հեռու պահել մեր ժողովրդին հնարավոր անցանկալի զարգացումներից: Մեր հորդորն է իրավապահ համակարգի ներկայացուցիչներին՝ անհրաժեշտ բոլոր պայմաններն ապահովել արդար ընտրությունների անցկացման և մեր հայրենակիցների ազատ կամարտահայտության համար:

Հայց ենք բարձրացնում առ Աստված մեր հայրենիքի անսասանության ու վերազարթոնքի և աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության համար: Աղոթում ենք, որ Տիրոջ անբավ ողորմությամբ հայրենաբնակ մեր զավակների նոր ընտրությունը ծառայի միմիայն ի բարին, ի սեր ազգիս ապահով, խաղաղ և առաջընթաց կյանքի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Արագածոտնի թեմի հիմնադրման 30-ամյակի առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Արագածոտնի թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պողոյանին, հոգևոր դասին, թեմական, ծիսական և վարչական խորհուրդների հարգարժան անդամներին ու հավատավոր զավակներին՝ Արագածոտնի տիրախնամ թեմի հիմնադրման 30-ամյակի առիթով:

Ուրախությամբ ենք անդրադառնում, որ անցած երեք տասնամյակներում թեմը բարեզարդվել է համայնքային կյանքի աշխուժացմամբ, եկեղեցաշինությամբ, սրբավայրերի նորոգությամբ: Գովելի է, որ եկեղեցականների և նրանց լծակից աշխարհականների միասնական ջանքերով առավել աշխուժացել են թեմի հոգևոր, կրթական և ազգային նախաձեռնությունները, զորացել է ժողովրդի կապը Սուրբ Եկեղեցու հետ, նոր շունչ է ստացել վանական կենցաղավարությունը:

Անցած երեսուն տարիների ընթացքում նաև նախանձախնդիր աշխատանք է իրականացվել ազգային-եկեղեցական արժեքների պահպանության, նոր սերնդի քրիստոնեական դաստիարակության, երիտասարդական միությունների եռանդուն գործունեության, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին զորակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Թեմի եկեղեցիները՝ որպես աղոթքի, համախմբման, Տիրոջ շնորհների բաշխման նվիրական սրբատեղիներ, շարունակում են զորացնել մեր ժողովրդի հավատը և նորոգել նրա հոգևոր կյանքը:

Սիրելիներ՛ն, Արագածոտնի թեմը, հիրավի, առանձնահատուկ խորհուրդ և կոչում ունի մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքում: Այս օրհնյալ թեմի տարածքում է ամփոփված մեծագույն վարդապետ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի աճյունը, որի տերունապարգև առաքելությունը հայոց գրերի գյուտով դարձավ մեր ազգի հավատի և ինքնության ամրոցը, մեր հարատևության անխորտակելի ամուր վեմը:

Գոհունակ սրտով փառաբանում ենք Ամենակալ Աստծուն, որ Արագածոտնի թեմի հոգևոր սպասավորները՝ որպես Տիրոջ անդաստանի քաջասիրտ մշակներ, մեսրոպյան ոգով են հոգատար ծառայություն բերում հավատացյալ ժողովրդին և անխախտ են պահում իրենց հավատարմությունը եկեղեցական կարգաց ու կանոնաց և աստվածակերտ Սուրբ Էջմիածնին:

Սիրելիներ՛ն, Արագածոտնի թեմի հիմնադրման 30-ամյակի բարեպատեհ առիթով վերստին հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պողոյանին, ծառայասեր հոգևորականներին և պատվարժան վարչականներին, հայրական Մեր սերը՝ հավատավոր բարեպաշտ հայորդիներին:

Աղոթում ենք, որ Բարերար Աստված Իր ամենազոր Աջով շեն ու անսասան պահի Արագածոտնի թեմը, նրա սրբավայրերը, քաջարի հովիվներին և աստվածասեր ժողովրդին՝ առավել զորացնելով հավատի, հույսի և սիրո մեջ:

Թող այս երեսնամյա վաստակը մշտանորոգ հաջողություններով պսակվի, և թեմի արդյունաշատ գործունեությունը կենդանի վկայություն լինի Հայ Եկեղեցու անսպառ կենսունակության, ազգապահպան առաքելության ու հոգևոր արթնության:

«Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկինս է» (Մատթ. Ե 16):

Թող Տիրոջ առատ շնորհները մշտապես հովանի լինեն Արագածոտնի թեմին և նրա հավատավոր զավակներին այսօր և միշտ. ամեն:

Մայր Աթոռում տեղի ունեցավ քահանայից ժողով

Մայիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ քահանայից ամենամյա ժողովը, որին մասնակցում էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, թեմերում և եկեղեցական տարբեր կառույցներում սպասավորող շուրջ 200 քահանա հայրեր:

Մինչ հավաքը հոգևոր դասը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում մասնակցեց Ճաշու ժամերգությանը, որից հետո Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ժողովն սկսեց իր աշխատանքը:

Հավաքը բացվեց քահանայից հավաքների կազմակերպիչ հանձնախմբի նախագահ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ողջույնի խոսքով: Այնուհետև ներկա հոգևոր դասին ներկայացվեց ամենամյա քահանայից հավաքների 10 տարվա համառոտ պատմությունը, ձեռքբերումները, նախաձեռնություններն ու այն կարևոր ուղենիշները, որոնք առավել արդյունավորեցին եկեղեցականների հոգևոր ծառայությունը:

Այնուհետև եկեղեցականներին իր հայրական օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ավանդական դարձած քահանայից ժողովները պատեհ առիթ նկատելով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի խորհրդով զորանալու, աղոթական մթնոլորտում միասնաբար խորհրդածելու Սուրբ Եկեղեցու հոգևոր առաքելության արդյունավորման շուրջ, այլև քննարկելու հոգևոր սպասավորության ճանապարհին տեղ գտնող խնդիրները, ինչպես և ժողովրդի ու հայրենիքի առջև ծառացած մարտահրավերների դիմագրավման ուղիները:

Ապա անդրադառնալով աշխարհում տեղ գտած ցնցումներին ու հատկապես տարածաշրջանում պատերազմական գործողություններին, որոնք իրենց ուղղակի և անուղղակի ներգործությունն ունեցան նաև ազգային և հայրենական կյանքի վրա, Նորին Սրբությունը խոր մտահոգություն

հայտնեց ՀՀ իշխանությունների կողմից իրականացվող հակաեկեղեցական արշավի, անհիմն մեղադրանքներով եկեղեցականաց դեմ հալածանքների, եկեղեցու ինքնավարությունը խաթարող միջամտությունների առնչությամբ: ➥ էջ 3

Մայր Աթոռում տեղի ունեցավ քահանայից ժողով

➥ էջ 2

«Արդարադատության ոտնահարմամբ նորանոր անօրինական արգելքներ են հարուցվում նաև հովվական առաքելության մեջ, զավթված են պահվում սրբավայրերը, առանձին եկեղեցիներում կարգալույծ անձինք իրենց հակականոնական, սրբապիղծ գործողություններով շարունակում են խռովել հավատացյալների հոգևոր զգացումները, աղճատել կրոնածիսական կյանքը:

Ունայնամտություն է սանձազերծված բռնաճնշումները հիմնավորվել Հայոց Եկեղեցու, այսպես կոչված, բարենորոգման ծրագրի իրականացման անհրաժեշտությամբ»,– նշեց Վեհափառ Հայրապետը՝ ցավ արտահայտելով, որ հանրությանը մատուցվող հիշյալ ծրագրի իրագործմանը կեղծ պատճառաբանություններով լծվել են նաև մի շարք բարձրաստիճան եկեղեցականներ և թեմերի քահանաներ, իսկ որոշ հոգևորականներ կամայական կարգով ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքել Պաշտպանության նախարարության և Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության հետ՝ ոտնահարելով Մայր Աթոռի իրավունքները, ինչը, անտարակույս, ունենալու է կարգապահական հետևանքներ:

Իշխող ուժի որդեգրած եկեղեցահալած քաղաքականության առնչությամբ Հայոց Հայրապետը հարկ համարեց, որ քահանա հայրերը շարունակաբար հանդես գան սպառիչ պարզաբանումներով, որպեսզի հավատավոր ժողովուրդը չտրվի կեղծ և անհիմն մեղադրանքների ազդեցությանը. «Հստակ է՝ իշխանությունները նպատակ են հետապնդում ամեն գնով պառակտելու, տկարացնելու Եկեղեցին, խոչընդոտելու



Եկեղեցու ազգաշահ, արդյունավետ գործունեությունը և նվազեցնելու նրա դերակատարությունը մեր ժողովրդի կյանքում, հատկապես՝ ազգային ինքնության, պատմական հիշողության և նվիրագործված արժեքների պահպանման հարցում»:

Խոսելով իշխող կուսակցության նախընտրական ծրագրում ներառված՝ Եկեղեցու հոգևոր պետի հեռացման և այլ գործողությունների նախատեսումով, այսպես կոչված, «բարենորոգման» օրակարգի մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց. «Հոգևոր կյանքի վերաբերյալ նման մոտեցումը հակասահմանադրական է ու դատապարտելի, հակասում է մեր Սուրբ Եկեղեցու կանոնական սկզբունքներին և ուղղակի միջամտություն է Եկեղեցու ինքնակառավարմանը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Արհեստածին «բարենորոգման» ծրագիրը կեղծ օրակարգ է: Եկեղեցու բարենորոգումը չի կարող իրականացվել իշխանության ճնշմամբ ու թելադրանքով՝ ուղեկցվելով նաև բացահայտ զրպարտություններով ու կեղծիքներով: Եկեղեցու բարեփոխությունը մշտական ներքին գործընթաց է՝ հիմնված բացառապես Եկեղեցու՝ դարերով ամրագրված կանոնակարգերի վրա, վավերացված եկեղեցական ժողովական մարմինների կողմից: Ուստի, պիտի ամեն ջանք ի գործ դնենք պաշտպանելու մեր Սուրբ Եկեղեցու պատմականորեն կանոնակարգված, ինչպես և ՀՀ օրենսդրությամբ, միջազգային հռչակագրերով երաշխավորված իրավունքները և կանխելու Եկեղեցու կյանքում այսօրինակ վտանգավոր նախադեպերի ստեղծումը»:

Դիմելով հոգևոր սպասավորներին՝ Նորին Սրբությունը հաստատեց, որ առկա փորձությունները պետք է հաղթահարել արժանապատվորեն, եկեղեցական կանոնների անշեղ հարգումով ու կարգապահությամբ, Սուրբ Եկեղեցու և նախնյաց ավանդների նկատմամբ հավատարմությամբ:

«Ամենքս այսօր պարտավորությունն ունենք առաջին հերթին Եկեղեցու մարմինը անխաթար, ամբողջական ու միասնական պահելու և թույլ չտալու, որ արտաքին միջամտություններով պառակտվի Եկեղեցին:

....Մայր Տաճարի խորանի առջև կատարած ուխտի հանդեպ հավատարմությունը պետք է առաջնորդի ամենքիս մեր բոլոր որոշումներում և քայլերում, որպեսզի Եկեղեցին, անսասան իր կոչման մեջ, հավետ լինի անլռելի կոչնակը աստվածահաճո կյանքի, քաջարի ջատագովը արդարության ու ճշմարտության, աննկուն պաշտպանը Քրիստոսի հետևորդների շահերի և իրավունքների: «Արթուն կացեք, հաստատուն մնացեք հավատի մեջ, քաջ եղեք, զորացեք»,– պատգամում է առաքյալը (Ա Կորնթ. 16.13): Այս գիտակցությամբ շարունակեք հովվական խնամք տանել և հոգալ կարիքները մեր ժողովրդի զավակների, քաջալերել ընթանալ աստվածահրության շավիղներով, մերժել ազգավնաս գաղափարներն ու գործողությունները»,– նշեց Նորին Սրբությունը՝ մաղթելով քահանա հայրերին ազգօգուտ ու բարեբեր ծառայություն և բարձրորեն գնահատելով այս դժվարին օրերին նրանց դրսևորած քաջարի ոգին, հաստատակամությունն ու նախանձախնդրությունը մեր Սուրբ Եկեղեցում կանոնականության ու միության պահպանման նկատմամբ:

Վերջում Վեհափառ Հայրապետը հայցեց, որ Տերը խաղաղության ու ապահովության մեջ պահի հայրենի երկիրն ու աշխարհասփյուռ հայությանը և անսասանություն ու հավետ պայծառություն շնորհի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Ապա ժողովի ընթացքում «Եկեղեցում առկա հիմնախնդիրների վերհանումը» զեկույցով հանդես եկավ Արագածոտնի թեմի Սաղմոսավանքի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Փառեն քահանա Առաքելյանը, իսկ «Համացանցային քարոզչության արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը» զեկույցով՝ Գուգարաց թեմի Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Տաճատ քահանա Բարսեղյանը:

Ներկայացված բանախոսությունների շուրջ ծավալվեցին քննարկումներ, եկեղեցականները ներկայացրին իրենց դիտարկումներն ու առաջարկները՝ հովվական ծառայության առավել արդյունավորման առնչությամբ:

Ժողովը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

Քահանայից ժողովի հայտարարությունը

Մենք՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան թեմերում սպասավորող քահանաներս, բարձր նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մայիսի 26-ին՝ Ավարայրի ճակատամարտի խորհրդանշական օրը, համախմբված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, գոհություն և փառք ենք վերառաքում Ամենակալ Աստծուն՝ համատեղ աղոթքի և եղբայրական ոգով մեր սրբազան առաքելության շուրջ մտորելու առիթի համար:

Առաքելական քարոզչությամբ հաստատված Հայոց Եկեղեցին Աստծո բարեխնամ հայացքի ներքո շարունակում է անշեղորեն ծառայել հայ ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս՝ զորացնելու բարեպաշտ մեր ժողովրդի հավատքը, նախանձախնդրությամբ հետամուտ լինելու ազգային ինքնության պահպանությանը, նպաստելու հայեցի կրթությանն ու դաստիարակությանը և տիրավանդ իր առաքելությամբ լինելու ճշմարտության ու արդարության ձայնը մեր հասարակության մեջ:

Հայոց Եկեղեցու համար դժվարին այս օրերին, երբ Հայաստանում պետական լծակների կիրառմամբ իրականացվող հակաեկեղեցական գործողություններով փորձ է արվում վերատեսության ենթարկելու եկեղեցական դարավոր կարգն ու կանոնը, հրաժարական պարտադրելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին, և Եկեղեցին, ըստ էության, ենթարկեցնելու քաղաքական իշխանությանը, վճռականորեն հայտարարում ենք, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնակառավարումը, կանոնական կարգն ու ներքին կյանքը ենթակա չեն որևէ քաղաքական ուժի կամ պետական մարմնի թելադրանքի: Հակաօրինական և հակասահմանադրական այս արշավն ուղղակիորեն վտանգում է համազգային մեր համերաշխությունն ու հասարակական կայունությունը, լրջորեն հարվածում նաև հայոց պետականության հիմքերին:

Միաժամանակ, խիստ դատապարտելի ենք համարում կարգալույծ հռչակված անձանց կողմից պետական հովանավորչությամբ հակականոնական ու սրբապիղծ գործողությունները, վանքերի ու եկեղեցիների, եկեղեցական կառույցների ու միջոցների բռնազավթումն ու ապօրինի գործածումը: Սա ոչ միայն կանոնական կարգի կոպիտ խախտում է, այլև միտումնավոր փորձ՝ ներսից խարխլելու եկեղեցական միաբանությունը: Ցավով ենք արձանագրում նաև, որ որոշ քահանա հայրեր ներգրավվում են այս պառակտիչ գործընթացներում՝ դառնալով հակաեկեղեցական ձեռնարկների կամա թե ակամա գործակիցներ: Նման ընթացքը խորթ է քահանայական ուխտին և չունի հոգևոր, բարոյական ու կանոնական, այլև մարդկային որևէ արդարացում: Կոչ ենք ուղղում մեր եղբայրներին՝ վերատեսության ենթարկելու իրենց խոտորյալ ընթացքը և բացառելու կանոնազանց գործողությունները:

Գոհություն ենք հայտնում առ Աստված, որ աշխարհասփյուռ մեր ժողովուրդը հաստատակամ է իր հավատարմության մեջ առ Սուրբ Էջմիածինը և վճռական՝ պաշտպանելու Հայոց Եկեղեցու իրավունքներն ու արժանապատվությունը: Յուրաքանչյուր փորձ՝ խաթարելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ինքնիշխանությունը, ոտնահարելու եկեղեցական կարգը կամ նսեմացնելու Ամենայն Հայոց Հայրապետի աստվածահաստատ իշխանությունը, բախվելու է համայն հավատավոր ժողովրդի և ուխտապահ ողջ եկեղեցականության հաստատուն ու անսասան դիմադրությանը:

Հայաստանում առաջիկա ընտրությունների և քաղաքական իրադարձությունների համատեքստում կոչ ենք ուղղում մեր հավատավոր ժողովրդին՝ դրսևորելու պատասխանատու վերաբերմունք, զերծ մնալու ապօրինությունից, ատելության խոսքից ու ապատեղեկատվության տարածումից և նպաստելու հասարակական համերաշխության կայացմանը:

Հավատարիմ լինելով մեր ուխտին և մյուռոնաբաշխ Սուրբ Էջմիածնին՝ որդիական մեր անվերապահ զորակցությունն ենք հայտնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ փորձության այս օրերին հայրապետական իմաստությամբ, հոգևոր արիությամբ և խաղաղ հաստատակամությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին առաջնորդելու համար:

Առ Աստված ապավինությամբ հայցում ենք, որ Տերն Իր ամենախնամ Աջը տարածի մեր ժողովրդի, մեր հայրենիքի և Սուրբ Եկեղեցու վրա՝ պահելով Հայաստանը խաղաղ, Հայոց Եկեղեցին՝ անսասան, և մեր հավատքը՝ անխախտ:

Եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայիսի 24-ին Միածնաէջ Մայր Տաճարում հընթացս Սուրբ և Անմահ Պատարագի տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում: Ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի եպիսկոպոսության աստիճանի արժանացան Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Պողոսյանը, Մասյացոտնի թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Ռուբեն վարդապետ Զարգարյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրյանը և Մայր Աթոռի Քարոզչական կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը:

Սրբազան արարողությունների առիթով Սուրբ Էջմիածին էին ժամանել Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարեբարներ, հասարակական գործիչներ, ուխտավորներ Հայաստանի տարբեր թեմերից:

Նախորդ օրը՝ երեկոյան, Մայր Տաճարում՝ Իջման Սուրբ Սեղանի առջև, կատարվեց ուխտադրման արարողությունը: Եպիսկոպոսացու վարդապետները, ծնրադիր վերահաստատելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Ամենայն Հայոց Հայրապետին հավատարմության ուխտը, եկեղեցականների ներկայությամբ ստորագրեցին իրենց երդմնագրերը:

Սուրբ Պատարագն սկսվեց Հայրապետական հանդիսավոր թափորով, որով ամպիոնի ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջնորդվեց դեպի Միածնաէջ Մայր Տաճար: Մինչ Սրբազան Խորհուրդը Մայր Տաճարի Սուրբ Ստեփանոս Նախասարկավագի խորանին կատարվեց ընծայացուների հավատքի ուղղափառության քննությունը: Վարդապետների արժանավորության մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսի առջև վկայեցին Հայ Եկեղեցու ներկայացուցիչներ՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաև հավատավոր ժողովուրդը ներկայացնող աշխարհականներ, որից հետո Սուրբ Պատարագը շարունակվեց Մայր Տաճարի Ավագ Խորանին:

Վեհափառ Հայրապետին որպես առընթերականներ սպասավորում էին Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը և Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը: Ընծայացուների խարտավիլակն էր Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

Պատարագի սրբազան արարողության ընթացքում, «Աստվածային և երկնային շնորհ» շարականի երգեցողության ներքո, վարդապետները, ծնկի գալով և ձեռքերը վեր բարձրացնելով, վերստին ուխտեցին իրենց անձերն ընծայաբերել Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորությանը՝ անշեղորեն հետևելով տերունավանդ պատգամներին և Եկեղեցու սրբազան կանոններին:



Այնուհետև Արթիկի թեմի առաջնորդ Գերաշնորհ Նարեկ եպիսկոպոս Ավագյանը հանդիսավոր թափորով Սուրբ Խորան բարձրացրեց Սրբալույս Մյուռոնը, որով Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եպիսկոպոսության կոչելով Իսահակ, Ռուբեն, Անանիա և Զաքարիա վարդապետներին, օծեց նրանց ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները: Արարողության ավարտին նորաօծ եպիսկոպոսներին հանձնվեցին նաև իրենց եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գավազանն ու մատանին:

Հիշարժան այս օրվա առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական պատգամը հղեց նորաօծ եպիսկոպոսներին և հավատավոր ժողովրդին՝ փառք ու գոհություն մատուցելով Աստծուն, որ եպիսկոպոսական ձեռնադրության և օծման սրբազան արարողությունը կատարվում է Հոգեգալստյան օրհնաբեր տոնին, երբ Եկեղեցին և հավատացյալները վերստին հաղորդ են դառնում Սուրբ Հոգու արփիափայլ շնորհների հեղման խորհրդին, որով սկիզբ դրվեց Քրիստոսի Եկեղեցու հաղթական առաքելության:

«Սիրելիներ, այսօր կրկնակի է ամենքիս ուրախությունը, քանզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի չորս նվիրյալ, բանիմաց և ջանասեր միաբաններ երկնային շնորհների հեղումով եպիսկոպոսական ձեռնադրության և օծման արժանացան:

....Դարեր շարունակ ձեռնադրության սրբազան խորհրդով արժանավոր մշակներ են կարգվել Հայոց Եկեղեցու անդաստանում, որպեսզի սուրբգրային պատգամներով լուսավորեն իրենց հանձնված հավատավոր հոտը և առաջնորդեն դեպի քրիստոսապարգև փրկություն»,— ասաց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ եպիսկոպոսներն առաքելական հաջորդականության կրողներն ու փոխանցողներն են և տերունավանդ իշխանությամբ հավատքի անաղարտության, Եկեղեցու կարգուկանոնի պահապանները, հոգիների խնամատարը, Եկեղեցու և հավատացյալների իրավունքների պաշտպանը:

Անդրադառնալով պատմության ընթացքում մեր երկրի դեմ ասպատակությունների հորձանուտներում, ինչպես և ցեղասպանության ու ստալինյան բռնապետության տարիներին եկեղեցականների հանդեպ իրականացված բռնաճնշումներին և հալածանքներին՝ Նորին Սրբությունը նշեց, որ կրելով բազում նեղություններ՝ հոգևորականները հաստատուն են մնացել առ Քրիստոս հավատարմության ու սիրո մեջ և, Աստծուն ապավինած, դիմակայել բոլոր դժվարություններին:

«Ցավով ենք անդրադառնում, որ Հայոց Եկեղեցու սպասավորներն այսօր ևս Հայաստանում իշխանությունների կողմից անհիմն մեղադրանքներով ենթարկվում են հետապնդումների, ինչպես նաև ազատազրկման»,— ընդգծեց Հայոց Հայրապետը՝ գոհություն հայտնելով Աստծուն, որ հոգևորականներն ի Հայաստան և ի սփյուռս աննկուն են ոգով, անխախտ են առ Սուրբ Էջմիածինը հավատարմության մեջ և, անդավաճան իրենց ուխտին ու կոչմանը, նախանձախնդրությամբ շարունակում են տերունապատվեր առաքելությունը՝ իրականություն դարձնելու տեսիլքները հոգևոր կյանքի պայծառության, պետականության ամրապնդման, հայրենիքի շինության ու հզորության:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ներկայացնելով եպիսկոպոսության արժանացած եկեղեցականներին և անդրադառնալով նրանց տարիների եկեղեցանվեր ու ազգասեր ծառայությանը, եպիսկոպոսական ձեռնադրության առիթով իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց վերջիններիս:

«Եպիսկոպոսական կոչումը՝ որպես նվիրապետության բարձր աստիճան, ենթադրում է առավել մեծ հանձնառություն և պատասխանատվություն Քրիստոսի Եկեղեցու մեջ: Եպիսկոպոսությունն ինքնին ծառայական խաչ է, որը Տիրոջ մշակն ստանձնում է Իջման Սուրբ Սեղանի առջև ծնրադիր ուխտով՝ իր կյանքն անմնացորդ ընծայելու անձնվեր ծառայության»,— նշեց Վեհափառ Հայրապետը:

«Այս բարդ ժամանակաշրջանում շարունակեք քաջալերել մեր ժողովրդի զավակներին ամուր մնալու աստվածասիրության ու հայրենասիրության մեջ: Եղեք համարձակ պահապանը հոգևոր և ազգային մեր արժեքների ու սրբությունների, մեր երկրի ու ժողովրդի և մեր Սուրբ Եկեղեցու արդար իրավունքների: Ձեր խնամքին հանձնված հավատացյալներին առաջնորդեք աստվածահաճո ուղիներով, նրանց սրտերում զորացրեք հավատքը, աննկուն կամքն ու արիության ոգին՝ դուրս բերելու մեր երկիրը վտանգներով ու փորձություններով լի այս դժվարին իրավիճակից և կերտելու հայրենիքի բարօր ու պայծառ ապագան: Ձեր բարձր առաքելությամբ ամենուր տարածեք տերունավանդ սեր, ազնվություն, բարություն ու արդարություն»,— պատգամեց Նորին Սրբությունը՝ հայցելով, որ Տերն Իր Սուրբ Աջով մշտապես զորացնի նորաօծներին ու նորանոր հաջողություններ պարգևի՝ ի փառս Աստծո, ի սեր ազգի, ի շինություն և ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ապա «Ողջույնի» ժամանակ ներկա եկեղեցականները բարձրացան Սուրբ Խորան և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ շնորհավորեցին նորաօծներին՝ համբուրելով նրանց մյուռոնադրոշմ աջը:

Սուրբ Պատարագի ավարտին նորաօծ Սրբազաններին եպիսկոպոսության կոչվելու առիթով շնորհավորեց նաև հավատավոր ժողովուրդը:

Հաջորդ շաբաթվա ընթացքում նորաօծ եպիսկոպոսները Մայր Տաճարում մատուցեցին ուխտի պատարագներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հառիճավանքի «Թրբանճյան ընծայարան» ավագ դպրոցը
Հայտարարում է 2026–2027 ուս. տարվա ընդունելություն

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի «Թրբանճյան ընծայարան» ավագ դպրոց կարող են դիմել Հայաստանի Հանրապետության և այլ երկրների մինչև 17 տարեկան արական սեռի այն քաղաքացիները, որոնք ավարտել են հիմնական դպրոցը կամ փոխադրվել են ավագ դպրոցի 11 և 12-րդ դասարաններ ու զավակն են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:

2026–2027 ուս. տարվա ընդունելությունը կանցկացվի հետևյալ առարկաների քննությամբ.

Հայոց լեզու (գրավոր)
Հայ գրականություն (բանավոր)
Հայոց պատմություն (բանավոր)

Դիմորդներն ընծայարանի տեսչության հետ ճանաչողական բնույթի զրույց կունենան նաև հետևյալ նյութերի շուրջ.

• Սուրբ Գրքի իմացություն,
• Հայ Եկեղեցու պատմության մասին գիտելիքներ,
• Եկեղեցական փորձառություն,
• Ինքնաարտահայտվելու կարողություն,
• Երաժշտություն (երգեցողություն, լսողություն, ռիթմի զգացողություն),
• Օտար լեզու (անգլերեն, ռուսերեն):

Ընդունելության համար դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

— դիմում ընծայարանի տեսչի անունով (լրացվում է տեղում),
— 2 լուսանկար (3x4),
— անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,
— սոցիալական քարտի պատճենը,
— հիմնական դպրոցի ավարտական վկայականը,
— տեղեկանք թեմի առաջնորդից կամ շրջանի հոգևոր հովվից,
— տեղեկանք առողջության մասին (սպասարկող բուժհիմնարկից),
— բնութագիր դպրոցի տնօրենից,
— տեղեկանք բնակավայրից,
— մկրտության վկայականի պատճենը,
— ինքնակենսագրություն:

Դիմումներն ընդունվում են մայիսի 25-ից մինչև օգոստոսի 11-ը՝ երկուշաբթիից շաբաթ, ժամը 10:00–15:00:

Հասցե՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Գևորգյան հոգևոր ճեմարան
Հեռախոս՝ (+374 10) 517–321, (+374 10) 517–322
Էլ. փոստ՝ harichavanq@mail.ru

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Մայիսի 16-ին **Մշակույթի մի խումբ գործիչների**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մշակույթի մի խումբ գործիչների, որոնք այցելել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իրենց զորակցությունը, որդիական սերն ու հավատարմությունը հայտնելու Սուրբ Եկեղեցուն և Ամենայն Հայոց Հայրապետին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակին, ներհասարակական կյանքում արձանագրվող ցավալի զարգացումներին ու մարտահրավերներին, ինչպես նաև եկեղեցի–պետություն հարաբերությունների ներկա մտահոգիչ ընթացքին:

Զրույցի ընթացքում կարևորվեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու աստվածահաստատ, պատմական և հոգեխնամ բացառիկ առաքելությունը՝ ազգային ինքնության պահպանման, հասարակության հոգևոր զորացման և համազգային միաբանության ամրապնդման գործում:

Առանձնակի շեշտվեց Հայոց Եկեղեցու և հայ մտավորականության հանձնառությունը արժեհամակարգային ճգնաժամի հաղթահարման, հանրային համերաշխության ձևավորման, ինչպես նաև հասարակության մեջ հոգևոր-բարոյական առողջ մթնոլորտի և սիրո ու միաբանության ոգու զորացման ուղղությամբ:

Մայիսի 21-ին **ԵԱՀԿ ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության ղեկավարին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի դիտորդական առաքելության ղեկավար Յանեժ Լենարչիչին: Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանում նախընտրական շրջանում առկա հասարակական-քաղաքական իրադրությանը, ընտրական գործընթացների խաղաղ

և թափանցիկ ընթացքի ապահովման, հանրային վստահության ու համերաշխության մթնոլորտի պահպանման անհրաժեշտությանը:

Մայիսի 25-ին **Նորաօծ եպիսկոպոսներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորաօծ Սրբազան Հայրերին՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Իսահակ եպիսկոպոս Պողոսյանին, Մասյացոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ռուբեն եպիսկոպոս Զարգարյանին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Ծատուրյանին և Մայր Աթոռի Քարոզչական կենտրոնի տնօրեն Գերաշնորհ Տ. Զաքարիա եպիսկոպոս Բաղումյանին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական սերն ու օրհնությունը բերելով եկեղեցականներին, շնորհավորեց վերջիններիս եպիսկոպոսական կոչմանն արժանանալու առիթով և մաղթեց արդյունավոր առաքելություն՝ ի պայծառություն Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի շինություն հայրենիքի:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ գրքերի շնորհանդես

Օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ Արցախին, Հայոց ցեղասպանությանը և հայ ազատագրական պայքարին նվիրված գրքերի շնորհանդես, որին մասնակցեցին գիտության, կրթության և մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ:

Շնորհանդեսին ելույթներով հանդես եկան հեղինակները, խմբագիրները և առանձին գիտնականներ:

Միջոցառման ընթացքում Ս. Էջմիածնի Մատենադարանի և հրատարակչության տնօրեն Արժանապատիվ Տ. Արարատ քահանա Պողոսյանը, ողջունելով ներկաներին, նշեց. «Միքայել Հեզեմանի «Հայոց ցեղասպանությունը» ուսումնասիրությունը՝ հիմնված Վատիկանի գաղտնի արխիվային վավերագրերի վրա, ևս մեկ անգամ փաստական ուժով հաստատում է մարդկության դեմ իրականացված մեծագույն ոճրագործություններից մեկը: Այս աշխատությունն առանձնահատուկ արժեք ունի այն իմաստով, որ նոր փաստաթղթային հենք է ավելացնում ցեղասպանության միջազգային ճանաչման և գիտական ընկալման գործընթացին՝ դառնալով հիշողության պահպանման կարևոր աղբյուր:

Ավետիս Հարությունյանի «Հայ գաղթականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին» աշխատությունը բացահայտում է այն ողբերգական իրականությունը, որտեղ Եկեղե-

ցին ոչ միայն հոգևոր կառույց էր, այլ նաև սոցիալական և մարդասիրական աջակցության առանցք: Գաղթականության պատմության և Եկեղեցու դերակատարության համադրումը մեզ հիշեցնում է, որ ազգային գոյատևման ծանրագույն պահերին հենց հոգևոր կառույցներն են կրել ժողովրդի ուսերին ծանրացած բեռը:

Կարեն Մաթևոսյանի և Թամարա Մինասյանի պատկերազարդ ուսումնասիրությունը Արցախի վանքերի, եկեղեցիների և ձեռագրերի մասին, իր հերթին, բացահայտում է հայկական մշակութային ժառանգության անգնահատելի շերտեր՝ ընդգծելով Արցախի հոգևոր և գրավոր մշակույթի դերը համազգային ինքնության պահպանման գործում:

Արմինե Տիգրանյանի ուսումնասիրությունը, որը վերաբերում է Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման գործընթացին, խիստ արդիական է: Այն փաստագրում է ոչ միայն մշակութային կորուստները, այլ նաև միջազգային իրավական համակարգերի արձագանքի խնդիրները՝ բարձրացնելով մշակութային իրավունքների պաշտպանության հրատապ հարցը:

Մեր ուսումնասիրությունը՝ «Սուրբ Էջմիածնի դերը 16–17-րդ դարերի ազատագրական պայքարում», վերահաստատում է Եկեղեցու ոչ միայն պատմական առաքելությունը՝ որպես ազգային համախմբման, գաղափարական առաջնորդության և ազատագրական շարժումների հոգևոր հիմքի, այլև արդի ժամանակաշրջանի առաքելությունը, քանի որ հայ ազատագրական պայքարը չի ավարտվել, այն այսօր ևս շարունակվում է:

Այս բոլոր աշխատությունները միասին ձևավորում են մեկ ընդհանուր գաղափարական դաշտ, որտեղ պատմությունը, հիշողությունը և ինքնության պաշտպանությունը փոխկապակցված են: Այսօր, երբ մեր ժողովուրդը կանգնած է նոր աշխարհաքաղաքական և մշակութային մարտահրավերների առաջ, նման ուսումնասիրությունները ոչ միայն գիտական արժեք ունեն, այլ նաև ազգային ինքնագիտակցության ամրապնդման կարևոր գործոն են:

Այս առիթով առանձնահատուկ երախտագիտությամբ և խոնարհումով ցանկանում ենք մեր շնորհակալությունը հայտնել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Նրա հայրապետական օրհնությամբ, մշտական հոգածությամբ և հետևողական աջակցությամբ է գործում Մայր Աթոռի Հրատարակչական բաժինը՝ իրականացնելով այն կարևոր առաքելությունը, որի շնորհիվ գիտական և հոգևոր արժեքները հասանելի են դառնում թե՛ մասնագետներին, թե՛ լայն հանրությանը:

....Այսօր ներկայացվող գրքերը ևս այդ շարունակական աշխատանքի վկայությունն են՝ ծնված նույն հոգատար միջավայրում, որտեղ գիտական պատասխանատվությունը զուգորդվում է հոգևոր առաքելության գիտակցությամբ: Այդ միջավայրի ձևավորման մեջ անուրանալի է Նորին Սրբության դերակատարությունը՝ որպես հոգևոր առաջնորդի, որը մշտապես կարևորել է գիտության, մշակույթի և ազգային ինքնության ամրապնդման գործը»:

Միջոցառման ավարտին ներկաներին օրհնության խոսք փոխանցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը:

Միջոցառումն ավարտվեց գինեձոնով:

«Վաչե և Թամար Մանուկյան»
մատենադարան

Լինելության ուխտը

Հայոց ոգու փոխակերպումը ցեղասպանությունից մինչև Սարդարապատ

Թաղման և վերածննդի դիալեկտիկան

Աստվածաշնչյան պատկերաբանության մեջ սերմը միայն գյուղատնտեսական պատկեր չէ: Այն գոյաբանական նախօրինակ է: «Եթե ցորենի հատիկը, հողի մեջ ընկնելով, չմեռնի, ինքը միայնակ կմնա. իսկ եթե մեռնի, բազում արդյունք կտա» (Հովհ. ԺԲ 24): Այս խոսքը բացում է մի խոր ճշմարտություն. մահը կարող է լինել ոչ թե վերջ, այլ անցում: Հայ ժողովրդի պատմությունը հենց այս սկզբունքի կենդանի մարմնավորումն է:

1915 թ. Հայոց ցեղասպանությունը աշխարհիկ տեսանկյունից թվում էր վերջնական գերեզման: Սակայն այստեղ գործեց աստվածաբանական այն պարադոքսը, երբ թաղվելը նույնական չէ փտելուն: Հայ ժողովուրդը թաղվեց հողի մեջ ոչ թե որպես դիակ, այլ որպես կենդանի սերմ: Ոգու անբացատրելի զորությամբ՝ այդ սերմը հողի մթության մեջ ոչ թե քայքայվեց, այլ սկսեց ծիլ տալ: Սարդարապատը և Բաշ-Ապարանը այդ սերմի առաջին հաղթական ճեղքումն էին դեպի լույսը: Ցեղասպանված ազգը, որին վիճակված էր լինել պատմության լուսանցքում, հանկարծ դարձավ սեփական ճակատագրի արարիչը՝ հիմնելով Առաջին հանրապետությունը: Սա ոգու հաղթանակն էր նյութի նկատմամբ. այնտեղ, որտեղ պիտի լիներ վախճան, ծնվեց պետականություն:

Թաղման և վերածննդի այս դիալեկտիկան Հայոց պատմությունը դուրս է բերում սովորական ողբերգության սահմաններից՝ այն վերածելով մի տիեզերական պատարագի: Եթե աշխարհիկ տրամաբանությունը տեսնում էր միայն անապատի ավազների մեջ մարող մի ժողովուրդ, ապա մետաֆիզիկական տեսողությունը վկայում էր սուրբ մասունքների պես հողին հանձնված մի սերնդի մասին, որի արյան մեջ արդեն իսկ բաբախում էր հարության գենը: Հայը հողի մեջ մտավ ոչ թե որպես պարտված զոհ, այլ որպես գալիք հունձքի խոստում:

Այս գործընթացի հոգևոր գագաթնակետը 1918 թ. մայիսյան հերոսամարտերն էին, որտեղ կենսաբանական մահվան դատավճիռը փոխարինվեց ազգային վերածննդի ավետիսով: Սարդարապատը ոչ միայն ռազմական հաղթանակ էր, այլև հոգևոր պայթյուն, որտեղ հողի խորքից հառած ծիլը ճեղքեց մոխրի շերտը՝ դառնալով անկախ պետականության կենսատու ծառ: Սա ապացույցն էր այն բանի, որ հայոց ոգին ունակ է նյութական ոչնչացումը վերածելու հոգևոր արարման: Արդ՝ Հայաստանի առաջին հանրապետությունը ոչ թե քաղաքական պատահականություն էր, այլ այն սուրբ հունձքը, որը ծնվեց հայոց գողգոթայից ընդամենը երեք տարի անց՝ վկայելով, որ մեր ազգային ինքնությունը խարսխված է ոչ թե մահվան վախի, այլ հարատև հարության անկոտրում կամքի վրա:

Մոխիրներից ծնված ծիլը. ոչ թե գոյատևում, այլ վերստեղծում

1915 թ. Հայոց ցեղասպանությունը մարդկային տրամաբանությամբ վերջակետ էր: Դա ոչ միայն ֆիզիկական բնաջնջման փորձ էր, այլև հիշողության, մշակույթի, ինքնության ջնջում: Բայց այստեղ տեղի ունեցավ այն, ինչը կարելի է անվանել «հոգևոր ֆիզիկայի խախտում»: Հայը չվերացավ: Ավելին՝ նա վերածնվեց: Այս վերածնունդը ոչ միայն մարմնական էր, այլև հոգևոր. ցավը վերածվեց հիշողության, հիշողությունը՝ ինքնագիտակցության, իսկ ինքնագիտակցությունը՝ դիմադրության: Այս վերստեղծման գործընթացում հայոց ոգին ապացուցեց, որ ոչնչացման ցանկացած փորձ միայն խտացնում է ներքին դիմադրողականության էներգիան: Եթե ցավը մնար որպես զուտ տառապանք, այն կքայքայեր ազգի ներքին հենասյուները, սակայն հայոց մետաֆիզիկական կամքը թույլ տվեց այդ ցավը թորել և դարձնել արարիչ կամք:

Սարդարապատ և Բաշ-Ապարան. պատմության մեջ ներխուժող ոգին

Սարդարապատը միայն ռազմական հաղթանակ չէ, այն գոյաբանական ապստամբություն է և աստվածաշնչյան այն հրաշքի կրկնությունը, երբ «Տիրոջ համար դժվար չէ փրկել թե՛ շատերով և թե՛ քչերով» (Ա Թագ. ԺԴ 6): Այնտեղ, որտեղ աշխարհիկ հաշվարկով պետք է տեղի ունենար վերջնական անկում, ծնվեց հակադարձ շարժում: Հայը, որ կորցրել էր ամեն ինչ, հանկարծ սկսեց գործել այնպես, կարծես ունի ամեն ինչ: Սա հիշեցնում է Գեդեոնի փոքրաթիվ զորքի հաղթանակը, որտեղ կարևորը ոչ թե թվաքանակն էր, այլ ոգու առկայությունը և հաստատակամ որոշումը՝ ԼԻՆԵԼ: Այդ որոշումը դարձավ պետականություն: Առաջին հանրապետությունը չծնվեց բարենպաստ պայմաններից, այլ կործանող հանգամանքներին հակադրվելուց: Հայոց գոյությունը կախված չէ պատմական հիմքերից, այլ այն սուրբ ուխտից, որը մենք կապել ենք Արարչի հետ:

Այս ոգու տրամաբանական շարունակությունն ու ամրապնդումն է Սարդարապատը կամ Բաշ-Ապարանը: Եթե Սարդարապատը սրտի պաշտպանությունն էր, ապա Բաշ-Ապարանը հայոց կամքի հարձակողական զարթոնքն էր՝ նման Մովսեսի բարձրացրած գավազանին, որը ճեղքեց անհնարինության ծովը: Այնտեղ հայն ապացուցեց, որ իր ոգին ունակ է ոչ միայն պաշտպանվելու, այլև տարածք ստեղծելու իր ապագայի համար, ինչպես Իսրայելի որդիները՝ Ավետյաց երկիրը նվաճելիս:

Բաշ-Ապարանը դարձավ այն սրբազան հողը, որտեղ հայոց «այո»-ն ստացավ իր ամենավճռական հնչեղությունը: Սա կռիվ էր հանուն այն բանի, որ հայոց աղոթքն ու լեզուն այլևս երբեք չլռեն, քանզի «Եթե Տերը չշինի տունը, զուր են չարչարվում այն շինողները» (Սաղմ. ՃԻԶ(ՃԻԷ) 1): Այս երկու հերոսամարտերը միասին եղան հայոց հարության երկփեղկ դարպասները, որոնց առջև մահը նահանջեց՝ տեղի տալով հարության լույսին:

Դեգերումներից դեպի Ավետյաց երկիր. պատմության սրբագրություն

Հրեա ժողովրդի պատմությունը հաճախ դիտվում է որպես աստվածային ընտրության օրինակ, սակայն Հայոց պատմությունը ցույց է տալիս, որ ընտրությունը կարող է դրսևորվել նաև առանց տեսանելի հրաշքների՝ որպես ներքին կոչում: Եգիպտոսից ելքը, անապատը, պատերազմները միայն պատմություն չեն, այլև հոգևոր ճանապարհ:

Հայ ժողովուրդը նույնպես անցել է իր անապատները, և հրեա ժողովրդի ելքը Եգիպտոսից, 40-ամյա դեգերումներն անապատում և մշտական պատերազմներն Ավետյաց երկրի համար ինչ-որ իմաստով հայելային արտացոլումն են Հայոց պատմության:

Դեգերումներից դեպի Ավետյաց երկիր տանող ճանապարհը Հայոց պատմության մեջ դառնում է պատմության սրբագրություն: Եթե հրեա ժողովրդի ելքն ուղեկցվում էր բացահայտ հրաշքներով՝ ծովի ճեղքմամբ և երկնային մանանայով, ապա հայոց ելքը դեպի ազատություն տեղի էր ունենում լռությամբ և լքվածությամբ, որտեղ միակ հրաշքը հենց սեփական ոգու աննահանջ դիրքն էր: Սա այն պահն է, երբ հավատքը դառնում է ոչ թե տեսանելիի ապացույց, այլ «չերևացող բաների հանդեպ վստահություն» (Եբր. ԺԱ 1):

Մեր պատմությունը հենց մեզ համար Սուրբ Գրքի շարունակությունն է՝ գրված մի ազգի կողմից, որն ընտրեց ինքնակամ գողգոթան՝ հավատալով, որ՝ «Ովքեր արցունքով են սերմանում, ցնծությամբ պիտի հնձեն» (Սաղմ. ՃԻԵ(ՃԻԶ) 5): Մեր դեգերումների ավարտը ոչ թե պարզապես հողն է, այլ այն սրբազան պետականությունը, որտեղ հայը վերջապես դադարում է լինել պանդուխտ և դառնում իր իսկ տան աստվածադիր տերը:

Թերահավատության փորձությունը. հավատը որպես պայքար

Ոչ մի ժողովուրդ չի անցնում իր ճանապարհը՝ առանց կոտրվելու և հուսահատության եզրին հասնելու: Բայց կարևոր է, թե ո՞րն է լինում պատասխանը՝ ուղղված նույն հուսահատությանը:

Հրեաները դեպի Ավետյաց երկիր քայլելու ճանապարհին հաճախ տրտնջում էին՝ կարոտելով անցյալը, որը պայմանավորված էր Եգիպտոսում իրենց ունեցած ապրելակերպով: Հայն էլ ունեցել է իր ընկրկումները՝ երբեմն ընտրելով հեշտը, երբեմն՝ մոռացությունը, բայց այստեղ կա էական տարբերություն. հավատը երբեք չի եղել հայի համար միայն զգացմունք, այն եղել է պայքար: Հավատալ նշանակում է մնալ, երբ ամեն ինչ քեզ դրդում է հեռանալու:

Թերահավատության փորձությունը դառնում է այն բովը, որտեղ զտվում է ազգային ոգին: Ինչպես հրեաները, անապատում կորցնելով տեսանելի առաջնորդությունը, սկսեցին ձուլել ոսկե հորթը՝ փնտրելով կեղծ ու հեշտ ապահովություն, այնպես էլ հայը պատմության քառուղիներում երբեմն գայթակղվել է օտարի տված թվացյալ հանգստի ու հարմարավետության հեռանկարով: Սակայն Հայոց պատմության հրաշքը ոչ թե անսխալականությունն է, այլ ապաշխարությունը և վերադարձը: Հայը միշտ գտել է իր մեջ զորությունն ասելու՝ «Մի՛ ուրախացիր ինձ վրա, ո՛վ իմ թշնամի, թեև ընկա, պիտի վեր կենամ» (Միքիա Է 8):

Այս պայքարում հավատը դադարում է լինել սոսկ վերացական դավանանք և վերածվում է գոյաբանական դիրքորոշման: Հավատալ նշանակում է պահել ուխտը՝ հակառակ տեսանելի իրականության: Երբ թվում էր, թե ամեն ինչ ավարտված է, և հայկականությունը դատապարտված է մոռացության, հենց այդ պահին հայը վերադառնում էր իր ակունքներին՝ Վարդանանց ուխտին, Նարեկացու աղոթքին և Սարդարապատի որոշմանը: Սա հիշեցնում է Անառակ որդու վերադարձը, որը ծայրագույն անկման հոգեվիճակում հիշեց իր հոր տունը և վերագտավ իր պատիվը:

Հայի ուժը ոչ թե անհաղթությունն է, այլ ընկնելուց հետո հառնելու աստվածային շնորհը: Մենք պահպանվել ենք, քանի որ մեր ընկրկումները եղել են ժամանակավոր, իսկ մեր ուխտը՝ հավերժական: Ուստի՝ հայոց հավատը պայքար է հենց այն պատճառով, որ այն պահանջում է մշտական արթնություն և դիմադրություն հեշտին ու անցողիկին: Մեր գոյությունը վկայությունն է այն բանի, որ՝ «Ով մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի» (Մատթ. Ժ 22): Մենք մնացինք, որովհետև ընտրեցինք վերադարձն այն Ճշմարտությանը, Որն ավելի զորեղ է, քան ցանկացած պատմական հուսահատություն:

Հայոց զորքերի օրհնումը Սարդարապատի ճակատամարտից առաջ. 1918 թ.

Աղետի պարադոքսը. ոչնչացման միջից ծնվող ինքնություն

Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոսթը մարդկության պատմության ամենախավար էջերից են: Սակայն այս երկու դեպքերը նաև ցույց տվեցին մի խոր ճշմարտություն. երբ ոչնչացումը դառնում է ամբողջական, դիմադրությունը դառնում է բացարձակ: Հրեաները վերակերտեցին իրենց պետականությունը, հայերը՝ իրենց համաշխարհային ներկայությունը: Սա պատահական չէ, սա այն է, ինչ կարելի է անվանել հիշողության աստվածաբանություն: Երբ ցավը չի մոռացվում, այն վերածվում է ուժի:

Աղետի պարադոքսն այն է, որ բացարձակ չարիքը հաճախ դառնում է բացարձակ հարության նախերգանք: Ինչպես Հոբը, որ կորցրեց ամենքին և ամեն ինչ՝ զավակներին, տունը և առողջությունը, բայց չհրաժարվեց Աստծուց և վերջում ստացավ ավելին, քան ուներ (Հոբ ԽԲ 10), այնպես էլ հայ և հրեա ժողովուրդները ոչնչացման մոխիրներից հառնեցին որպես նոր որակի ինքնություններ: Երբ մարդկային չարիքը հասնում է իր գագաթնակետին, գործի է դրվում աստվածային այն օրենքը, որ՝ «Լույսը խավարի մեջ լույս է տալիս, և խավարը նրան չնվաճեց» (Հովհ. Ա 5):

Այս «հիշողության աստվածաբանությունը» ենթադրում է, որ ցավը ոչ թե պարզապես անցյալի բեռ է, այլ ապագայի հիմք: Ցեղասպանության և Հոլոքոսթի միջով անցած ազգերի համար հիշելը դարձել է սրբազան պարտականություն, քանզի մոռացությունը հավասարազոր է վերջնական պարտության: Մենք սովորեցինք ցավը թորել և դարձնել կենսատու էներգիա. հրեաների համար դա արտահայտվեց Իսրայել պետության հզորացմամբ, իսկ հայերի համար՝ համաշխարհային ցանցային ներկայությամբ և հոգևոր անընկճելիությամբ: Սա նման է Հակոբի գիշերային մարտին Աստծո կամ հրեշտակի հետ, որից նա դուրս եկավ կաղալով, բայց օրհնված և նոր անուն ստացած (Ծննդ. ԼԲ 24–28): Մենք ևս պատմության այդ մարտից դուրս եկանք վերքերով, բայց այդ վերքերը դարձան մեր ինքնության անբաժանելի և զորեղ մասը:

Ոչնչացման միջից ծնվող ինքնությունն ամենակենսունակն է, քանի որ այն կոփվել է մահվան հետ անմիջական առերեսմամբ: Մեր հավաքական հիշողությունը դարձել է այն հոգևոր վահանը, որի վրա փշրվում են բնաջնջման բոլոր նոր փորձերը: Երբ ցավը վերածվում է ուժի, այն դադարում է լինել զոհի կարգավիճակի ցուցիչ և ստանում է Արարչի «գործընկերոջ» կոչում, որ պատասխանատու է աշխարհում արդարության և լույսի հաղթանակի համար: Քանզի «Աստված մտերիմ է սրտով կոտրվածներին և փրկում է հոգով խոնարհվածներին» (Սաղմ. ԼԳ 19)՝ վերածելով նրանց տառապանքը հավերժական հաղթանակի վկայության:

Աստվածամոր «այո»-ն՝ որպես ազգային ծածկագիր

Տիրամոր «այո»-ն մարդկության պատմության ամենահզոր որոշումներից մեկն է: Այն որոշում է, որ միավորում է խոնարհությունը և քաջությունը: Հայ ժողովուրդն իր ամբողջ պատմության ընթացքում կրկնել է այդ նույն կառուցվածքը: Մենք ընդունել ենք մեր ճանապարհը՝ չնայած ցավին: Բայց այստեղ կարևոր է հասկանալ՝ սա հնազանդություն չէ պարտադրանքին: Սա ընտրություն է: Եվ հենց այդ ընտրությունն է մեզ դարձնում այն, ինչ կանք: Աստվածամոր «այո»-ն որպես ազգային ծածկագիր դիտարկելը նշանակում է Հայոց պատմությունը տեսնել ոչ թե որպես պատահականությունների շղթա, այլ որպես սրբազան պատասխանատվություն:

➥ էջ 8

Հայ Առաքելական Եկեղեցին Առաջին հանրապետության տարիներին

«Ա՛զգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարատյան երկրի վրա:

Թուրքը, կոտորած ու ավեր փռելով, գալիս է, և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց Հայրապետին փախուստի մղել: Նրանք ինձ առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը, մեր սրբարանը, հայ ժողովրդի վերջին կտորը:

Ո՛չ և ո՛չ: Հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդ մնացած Մայր Աթոռը: Եթե հայ ժողովուրդը չի կարող թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չէ փրկելու մեր սրբությունները, ապա ես ինքս սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր Տաճարի գավիթում, բայց չեմ հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ աթոռից:

Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ և ո՛չ թե ողորմելի ստրուկի պես ոսոխի առաջ սողալով....»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանց, 1918 թ., մայիս

1918 թ. ապրիլի 22-ին Անդրկովկասը հռչակվեց անկախ հանրապետություն: Մայիսի 11–26-ը տեղի ունեցավ Բաթումի խաղաղության կոնֆերանսը: Թուրքերն Անդրկովկասյան կառավարությունից պահանջեցին Երևանի նահանգի 2/3 մասը, Թիֆլիսի նահանգից՝ Ախալքալաքի և Ախալցխայի գավառները, ինչպես նաև Անդրկովկասյան երկաթգծի հսկողությունը:

Գտնվելով ծայրահեղ ծանր վիճակում՝ հայ ժողովուրդը և Մայր Աթոռը փակուղուց դուրս գալու ճանապարհներ էին փնտրում: Հայ ժողովրդական կուսակցությունը որպես փրկության ելք առաջարկում էր դիմել Թուրքիայի դաշնակից Գերմանիայի կառավարությանը: Հայ ժողովրդական կուսակցությունը, որը Գերմանիայի կայսրին դիմելու նախաձեռնող էր, մասնակցությամբ Մ. Պապաջանյանի, Գևորգ եպիսկոպոս Չորեքչյանի, Հ. Առաքելյանի և ուրիշների, հատուկ նիստ հրավիրեց՝ քննարկելու Գևորգ Ե Կաթողիկոսի նամակը՝ ուղղված Գերմանիայի կայսրին:

1917 թ. դեկտեմբերից Կովկասյան ռազմաճակատն սկսեց փլուզվել, և ռուսական բանակի զինվորները, թողնելով իրենց դիրքերը, վերադառնում էին կենտրոնական Ռուսաստան:

Կարս քաղաքը և Կարսի մարզը գրավելուց հետո թուրքերը սրի քաշեցին տեղի հայության մի մասին, իսկ մյուս մասն էլ գաղթեց Ալեքսանդրապոլ: Մայիսի 15-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, և հայ զինվորականները լքեցին քաղաքը: Քաղաքը վերջինը լքեցին Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետ Սմբատյանը և քաղաքի ինքնավարության երեք անդամներ: Ինչպես առանց մարտի հանձնվեց Կարսի բերդը, նույն կերպ էլ առանց հակամարտի հանձնվեց Ալեքսանդրապոլը:

Մայիսի 19-ին թուրքերի 36-րդ Կովկասյան դիվիզիան ներխուժեց Արարատյան դաշտ և հաջորդ օրը գրավեց Արաքս կայարանը, որը գտնվում էր Սարդարապատից 10 կմ հեռավորության վրա: Այս ուղղության զինվորական խմբավորման հրամանատարը գեներալ Մովսես Սիլիկյանն էր, որն իր հրամանատարական կետը հաստատել էր Գևորգյան ճեմարանում: Ստույգ տեղեկություններ ստանալով թուրքերի առաջխաղացման մասին՝ Երևանի ապագա պարետ Ա. Շահխաթունու ընկերակցությամբ Մ. Սիլիկյանն այցելեց Գևորգ Ե Կաթողիկոսին և առաջարկեց նրան անվտանգության համար մեկնել Սևանա վանք: Այս առաջարկին կաթողիկոսը պատասխանեց. «Եթե հայկական ուժերն ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, ապա ես ինքս կանեմ դա, հոգ չէ, թե կզոհվեմ հազարամյա Մայր Տաճարի շեմին»: Եվ Վեհափառ հայրապետը չլքեց Մայրավանքը…

Գևորգ Ե-ի հրամանով Արագածից մինչև Սևան մայիսի 21–29-ը անընդհատ ղողանջեցին բոլոր եկեղեցիների զանգերը՝ ժողովրդին զենքի կոչելով:

Հայ հոգևորականության բազմաթիվ ներկայացուցիչներ մասնակցեցին կռիվներին: Հայկական բանակի յուրաքանչյուր գունդ ուներ իր երեցը: 1918 թ. կազմված գնդերեցների մասին հրահանգի համաձայն՝ յուրաքանչյուր գնդերեց պարտավոր էր ունենալ մատյան, որի մեջ ցուցակագրելու էր գնդի զինվորներին՝ անհրաժեշտ տվյալներով: Գնդի անձնակազմի բոլոր անդամները համարվում էին գնդերի ծխականներ:

Սարդարապատի 5-րդ հետևակային հերոսական գունդը բաղկացած էր արցախցիներից, որի հրամանատարն էր գնդապետ Պողոս Բեկ-Փիրումյանը: Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը ռազմի դաշտում այդ գնդի ռազմիկներին մկրտեց «Մահապարտներ» անունով:

Սարդարապատի ճակատամարտին մասնակցեցին նաև գյուղական ծխական հովիվները՝ իրենց գլխավորած աշխարհազորային ջոկատներով: Եզնիկ և Թադևոս վարդապետների և Տեր Հովհաննեսի առաջնորդած կամավորները գործում էին 5-րդ գնդում:

Հայ հոգևորականությունը՝ զենքը ձեռքին, ոգեշնչում էր զինվորներին և բարձրացնում նրանց մարտական ոգին:

Սարդարապատի հաղթանակից հետո կաթողիկոսը Մայր Տաճարում հանդիսավոր Պատարագ մատուցեց:

Ինչպես Սարդարապատում, Բաշ Ապարանի հերոսամարտում ևս հայ հոգևորականությունը մարտնչում էր քաջաբար: Բաշ Ապարանի մարտին մասնակցեց Փամբի գյուղի ծխատեր Տեր Գրիգոր քահանա Հայրապետյանը՝ իր ծխականներից կազմված ջոկատով: Ապարանի Վարդենիս գյուղի ծխատեր Հովհաննես ավագ քահանա Տեր-Մինասյանն առաջնորդում էր Մուշից, Սասունից, Ալաշկերտից և Բայազետից Ապարան ներգաղթածների՝ 200 հոգուց բաղկացած ջոկատը:

Տեղեկանալով թշնամու առաջխաղացման մասին՝ Տեր Հովհաննեսն իսկույն ևեթ գործի է անցնում, շրջանի գյուղերի քահանաների միջոցով եկեղեցիների զանգերի ղողանջներով տագնապ է բարձրացնում և ժողովրդին ոտքի հանում՝ զինված դիմադրություն ցույց տալու:

Բաշ Ապարանի ռազմաճակատում թուրքերի առաջապահ զորամասերի վրա առաջին գնդակներն արձակել էին Նիգավանի ծխատեր Տեր Տաճատի և Տեր Հովհաննեսի խմբերը:

Չդիմանալով հայկական ուժերի ճնշմանը և մարտի դաշտում տալով մեծ կորուստներ՝ ջախջախված թշնամին, մարտի դաշտում թողնելով զոհեր և զինամթերք, մայիսի 28-ին նահանջեց դեպի Ալեքսանդրապոլ:

Մայիսի 28-ին Դարպաս գյուղի ծխատեր Տեր Կոմիտաս քահանա Սարգսյանն իր ծխականների հետ Լեռնապատում և Վանաձորի Տարոն թաղամասում դիմադրություն կազմակերպեց:

Հայ ժողովրդի ճակատագրական այս ժամին՝ 1918 թ. մայիսի 28-ին, հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Հայ աշխարհականը և հայ հոգևորականը միահամուռ ուժերով կերտեցին Հ�հ պետություն և Կառավարություն:

1918 թ. հուլիսի 6-ին Թիֆլիսից հայոց Կառավարությունը տեղափոխվեց Երևան: Մինչ այդ՝ 1917 թ. փետրվարից, Երևանի նահանգը ղեկավարում էր Ազգային խորհուրդը՝ Երևանի հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի գլխավորությամբ. անդամներն էին Մ. Մուսինյանը, Գ. Տեր-Խաչատրյանը, Դ. Զուբյանը, Գ. Տեր-Հակոբյանը, Մ. Հարությունյանը, Ա. Աստվածատրյանը, Թ. Նիկողոսյանը:

Հուլիսի 6-ին Երևան ժամանեց հայոց նորաստեղծ Կառավարությունը, որին ողջունելու համար Գևորգ Ե-ն կազմեց Մայր Աթոռի պատվիրակություն՝ Հուսիկ արքեպիսկոպոս Մովսեսյանի գլխավորությամբ: Պաշտոնական ընդունելությունը տեղի ունեցավ հուլիսի 7-ին: Հուսիկ արքեպիսկոպոսը և Խորեն

Մ. Հարությունյան, Վերջ Գողգոթային. Հաղթություն, 2018 թ.

եպիսկոպոսն այցելեցին կառավարության անդամներին: Հուսիկ Սրբազանը ողջունեց Հայաստանի նորաստեղծ Կառավարությանը. «Ազգիս Հայրապետը ողջունում է և օրհնում է Հայաստանի Հանրապետության պաշտոնյաների գալուստը: Նորին Սրբությունը Մայր Աթոռի միաբանների հետ աղոթում է և խնդրում Աստուծո կարողություն և հաջողություն երկրի վերակազմության շինարար գործում»:

1919 թ. մայիսի 16-ին ՀՀ Կառավարության կողմից ընդունվեց Երևանի համալսարանի հիմնադրման որոշումը: Շուտով հաստատվեց համալսարանական կազմակերպիչ հանձնաժողովի անդամների կազմը, որի մեջ ընդգրկվեցին նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճեմարանի տեսուչ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը և Վիրահայության նախկին առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Հետագայում Մեսրոպ Սրբազանը համալսարանում դասավանդում էր հունարեն, լատիներեն և հայոց պատմություն:

1920 թ. հունվարի 25-ին Մայր Աթոռի վանական խորհրդի և միաբանական ժողովի նախագահ Մատթեոս եպիսկոպոս Մատթևոսյանը Մայրավանքի միաբանության կողմից Երևանի համալսարանի ռեկտոր Յուրի Ղամբարովին նամակ ուղարկեց Ալեքսանդրապոլ. «Էջմիածնի միաբանութիւնը մեծ հրճուանքով ողջունում է Ազատ Հայաստանի անդրանիկ համալսարանի բացումը, հաւատում է, որ գիտական այդ հաստատութիւնը պիտի Հայաստանի բնակչութեան կուլտուրական-քաղաքակրթական կեանքի հզօր զարկերակը լինի»:

1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում՝ տեղի առևտրական դպրոցում, հանդիսավոր բացվեց Երևանի համալսարանը, որտեղ ընթերցվեց Գևորգ Ե Կաթողիկոսի կոնդակը: Սկզբում համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանն էր Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, իսկ հետո՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը:

1920 թ. մայիսին տեղի ունեցավ հայ բոլշևիկների ապստամբությունը: Գևորգ Ե Կաթողիկոսը պաշտպանեց Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազգային Կառավարությանը և հայ ժողովրդին կոչ արեց վճռական պայքարի ելնել հայրենիքի նորահայտ «փրկարարների» դեմ: Կաթողիկոսի կոչի մեջ մասնավորապես գրված էր. «Մենք, որ ապրել և ապրում ենք հայրենիքի միութեան և ազատութեան յոյսով, այսօր՝ հայ կեանքի վերածնութեան գարնան արշալոյսի առկայծման օրերին, վշտով տեսնում ենք, թէ ինչպէս մոռացել ենք մի ընդհանուր լեզու ու նպատակը, հայ կեանքի շարժող արիւնի տակ, տեսնում ենք, թէ ինչպէս անյայտ, անորոշ, մշուշապատ գաղափարներով տարուած մարդիկ փոսեր են փորում Միացեալ և անկախ հայրենիքին ծանր վտանգներ սպառնացող անկախ օրերում՝ փոխանակ մի ընդհանուր գործի շուրջը համախմբուելու, մարդիկ անհատական և խմբական ջլատիչ գործողութիւնների են դիմում, հայրենի նաւը անխարդախ նաւահանգիստ հասցնելու ծանր աշխատանքների այս դառն օրերում…

Մենք, ինչպէս և մեր երջանկայիշատակ նախնիքները, որ աշխատանք են թափել տաճկահայ դատի համար, լաւ օրերի, յոյսի ակնկալութեամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ րոպէներին և երբ վտանգուած ենք տեսնում հայրենիքի միութեան գործը, բայց նամանաւանդ հայ ազգի ֆիզիկական գոյութեան ճգնաժամային գործը, իբր ընդհանրական հայրապետ, մեր սրբազան պարտքն ենք համարում այս ծանր, կասենք օրհասական րոպէներին հայկական խրատով դիմել բոլորին և զգաստութեան կոչ անել – Հայ ժողովո՛ւրդ, համախմբուի՛ր քո հայրենի Հանրապետության պահպանութեան գործի շուրջը. դա՛ է քո հայրենիքի փրկութեան միակ ճանապարհը»:

Այս կոչով կաթողիկոսը կատարում էր այն, ինչին սպասում էր երկընտրանքի առջև մտամոլոր կանգնած հայ ժողովուրդը: Այդ դժվարին ժամանակներում իր աջակցությամբ և օրհնանքով Վեհափառ Հայրապետն անցավ անկախ Հայաստանի պաշտպանների կողմը և այդպիսով հնարավորինս հետաձգեց բոլշևիկյան Ռուսաստանի ժամանումը Հայաստան: Վեհափառ Հայրապետի կոչը լսվեց: Ժողովուրդը, ոգևորված այդ կոչով, զենք վերցրեց, հաղթեց բոլշևիկներին, որոնք ժողովրդի լայն խավերի մեջ չունեին աջակցություն: Երևի թե գտնվելով ծայրահեղ դժվարին պայմաններում՝ ՀՀ Կառավարությունն առաջարկել էր Մայր Աթոռին կնքել մի դաշնագիր, որի համար Մայր Աթոռին տրվելու էր լայն ինքնավարական պայմաններ, ընդհուպ անկախ պետության լիազորություններ:

1920 թ. սեպտեմբերի 24-ին սկսվեց թուրք-հայկական պատերազմը, որը ձգվեց մինչև դեկտեմբերի 2-ը: Սեպտեմբերի 28-ին թուրքական զորքերը գրավեցին Սարիղամիշը և Կաղզվանը՝ մոտենալով Իգդիրին: Այս պատերազմը ճակատագրական նշանակություն ուներ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման տեսանկյունից:

1920 թ. հոկտեմբերի 12-ին Գևորգ Ե Կաթողիկոսը հանդես եկավ «Հոգևորականների մասնակցութիւնը» կոնդակով՝ հայ ժողովրդին ոգևորության և պայքարի կոչելով ու հենց այդ առթիվ հիշեցնելով Ավարայրը՝ նշելով, որ այժմ էլ պետք է կռվեն Վարդանանց նման: Նա մասնավորապես ասում էր. «Հայ Զորապետներ, յիշեցէք հայրենիքի եւ եկեղեցու պաշտպան Ս. Վարդանին, վերցրէք ձեր գլխարկները, խաչակնքեցէք ձեզ եկեղեցու պաշտպան Ս. Վարդանին, վերցրէք ձեր գլխարկները, խաչակնքեցէք ձեզ հանուն հայրենիքի եւ սուրը ձեռքին խոյացէք արծւօրէն թշնամու վրայ, եւ թող ձեր սպայակոյտը եւ քաջարի զինուորները ձէր յետևից բազէների նման հետևին ձեզ»:

Այս կոնդակը Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը կարդաց Ալեքսանդրապոլում, իսկ Սևանի մենաստանի վանական կառավարության նախագահ և Նոր Բայազետի գործակալ Եզնիկ վարդապետ Վարդանյանը՝ Նոր Բայազետում և Վարդենիսում:

Հոկտեմբերի 30-ին թուրքերը գրավեցին Կարսը, որտեղ գերի ընկան երկու հայ գեներալներ՝ Դանիել Բեկ-Փիրումյանը և Քրիստափոր Արարատյանը, 30 սպա և մոտ 3 հազար հայ զինվորներ: Գերի ընկածների մեջ էր նաև խիզախ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը: Հինգ օրից հետո թուրքական բանակը մոտեցավ Ալեքսանդրապոլին: Թուրքական զորքի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշան պահանջեց հանձնել Ալեքսանդրապոլը, և նոյեմբերի 7-ին թուրքական զորքը մտավ Ալեքսանդրապոլ: Նոյեմբերի 11-ին թուրքերը գրավեցին Հարթագյուղի և Արգինայի կայարանները և երկու ուղղությամբ շարժվեցին դեպի Երևան:

Դեկտեմբերի 3-ին Հայաստանը խորհրդայնացվեց, դաշնակցականները թուրքերի հետ ստորագրեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը չիրագործվեց, որովհետև Հայաստանն արդեն իսկ դարձել էր խորհրդային հանրապետություն:

Ստեփան ՍՏԵՓԱՆՅԱՆՑ, պ. գ. դ.

Ի՞նչ դեր ունեցավ Սարդարապատի ճակատամարտում Հայ Եկեղեցին, և ինչո՞ւ մեր օրերում լուծարվեց ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդությունը

Սարդարապատի հերոսամարտը Հայոց պատմության այն բացառիկ էջերից է, որտեղ Եկեղեցու դերն ու հոգևորականի կերպարը դուրս եկան ավանդական սպասավորության սահմաններից՝ դառնալով ազգային գոյության պահպանման առանցք: Ճակատամարտի հաղթանակի հիմնաքարը դրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի աննկուն կամքի շնորհիվ: Երբ թուրքական զորքերը մոտենում էին Էջմիածնին, և զինվորական հրամանատարությունն առաջարկում էր Կաթողիկոսին անվտանգության նկատառումներով տեղափոխվել Սևան, Վեհափառը կայացրեց պատմական որոշում՝ անվարան մնալով Մայր Աթոռում և պատրաստ լինելով մեռնելու տաճարի շեմին: Վեհափառի հրամանով՝ մայիսի 21–29-ը՝ ութ օր շարունակ, անդադար ղողանջեցին Մայր Աթոռի և շրջակա բոլոր եկեղեցիների զանգերը՝ տագնապ հնչեցնելով և ժողովրդին կոչ անելով զինվորագրվելու հայրենիքի պաշտպանությանը: Եվ սա ստեղծեց համազգային հզոր զարթոնքի մի աննախադեպ մթնոլորտ:

Հայ Եկեղեցին Սարդարապատում էր ոչ միայն աղոթքով, այլև զենքով: Հոգևորականները կազմեցին առանձին ջոկատներ և դարձան զինվորների կողքին մարտնչող ոգիներ՝ «վասն հաւատոյ և վասն հայրենեաց»: Բազմաթիվ սարկավագներ, վարդապետներ ու քահանաներ իրենց զգեստների վրա կապեցին փամփշտակալներ և դարձան մահապարտներ՝ սեփական օրինակով ցույց տալով, որ հայրենիքի պաշտպանությունը սուրբ գործ է: Եկեղեցու ներկայությունը ճակատամարտին հաղորդեց սրբազան բնույթ: Զինվորը հասկանում էր, որ կռվում է ոչ միայն հողի, այլև իր հավատքի և սրբությունների համար: Մարտից առաջ հոգևորականները կատարում էին նաև ընդհանրական խոստովանություններ և բաշխում Ս. Հաղորդություն, ինչը զինվորին տալիս էր հոգևոր ամրություն, անսասանություն և մահն անտեսելու ուժ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը վերածվել էր ռազմական ճամբարի և կազմակերպչական կենտրոնի: Եկեղեցու միջոցներով և ջանքերով կազմակերպվում էին ժողովրդական աշխարհազորի սնունդը, հագուստը և բժշկական օգնությունը: Ճակատամարտերին զուգահեռ՝ Եկեղեցին շարունակում էր հազարավոր գաղթականներին խնամքի տրամադրումը՝ թույլ չտալով, որ թիկունքում քաոս սկսվեր, ինչը կթուլացներ ռազմաճակատը: Առանց Եկեղեցու վճռական կեցվածքի և հոգևորականների անձնական սխրանքի՝ Սարդարապատի հաղթանակը՝ որպես հոգու և կամքի պատմական հաղթանակ, հազիվ թե հնարավոր լիներ:

Հայաստանի նորագույն ժամանակներում Հայոց բանակում 20 և ավելի տարի հոգևոր ծառայություն իրականացրած ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդությունը, ինչպես հայտնի է, 2026 թ. հունվարի 29-ին, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով, լուծարվեց: Դա պարզապես վարչական որոշում չէր, այլ մեր նորագույն պատմության մեջ մի աննախադեպ հետքայլ, որ հարված հասցրեց բանակի և ընդհանրապես հայ մարդու հոգևոր անվտանգության հիմքերին և մեր ժառանգորդական հիշողությանը:

Եկեք տեսնենք, թե ինչից զրկվեց Հայոց բանակը.

1. ՀՀ ԶՈՒ հոգևոր սպասավորությունը եղել է հայկական բանակի մարտունակության և զինվորի հոգեկան տոկունության անբաժանելի մաս, ներքին ամրության, կարգապահության և զինվորի հոգեկան առողջության կարևորագույն հենասյուներից մեկը:

2. Հոգևորականն այն մարդն է, որ զինվորի կողքին էր ամենածանր պահին՝ պատերազմի ժամանակ՝ փարատելով մահվան վախը, որի դեմ միակ իրական մխիթարությունը հավատն է Աստծո ներկայության մեջ հավիտենական կյանքի և նահատակության սուրբ պսակի հանդեպ:

3. Հոգևորականն աղոթքով, հոգևոր զրույցով օգնել է զինվորին՝ ամոքելու պատերազմների, մարտական առաջադրանքների ընթացքում ստացած հոգեբանական վերքերը՝ մարտընկերների կորուստը և այլն, որոնք աշխարհիկ հոգեբանությանը հաճախ անհասանելի են:

4. Հոգևորականը եղել է բանակի խիղճն ու զինվորի հոգևոր թիկունքը:

5. Հոգևորականի ներկայությունը զինվորի մեջ վառ է պահել պատմական հիշողությունը, հոգևոր դասի և աշխարհականի միասնության կարևորությունը:

6. ՀՀ ԶՈՒ հոգևոր սպասավորության եկեղեցիներում զինվորականները (ծառայող կամ բուժման մեջ գտնվող), բուժանձնակազմն ստանում էին հոգևոր սնունդ՝ Ս. Հաղորդությամբ և Ավետարանի քարոզով:

7. Եկեղեցին կառուցվում և օծվում է որպես Աստծո տուն: Այնտեղ Ս. Պատարագի մատուցման դադարեցումը տվյալ վայրից Աստծո օրհնության ու շնորհի հոսքի կասեցում է: Աղոթքի ու Պատարագի բացակայությունը եկեղեցին դարձնում է հոգևորապես անպաշտպան:

8. Հայ զինվորը հաղթել է նաև հավատով: Մեր նորագույն պատմության մեջ Շուշիի անառիկ բերդի ազատագրումը խաչը մեջքին կրող հայ զինվորականների կողմից եղավ նաև Աստծու շնորհով, հոգևորականի օրհնությամբ և աղոթքով:

9. Հոգևորականը պատերազմի արհավիրքներից հետո օգնել է զինվորին՝ վերադառնալու բնականոն կյանքին և հաղթահարելու հետպատերազմյան սինդրոմը:

10. Բանակում հոգևորականի բացակայությունը, որպես կանոն, հանգեցնում է ինքնասպանությունների, բարոյալքման և կարգապահական խնդիրների աճի:

11. Բանակում հոգևորականն այն անձն էր, որ կարողանում էր սփոփել, աղոթքով, հուղարկավորության կամ բժշկության կարգերով մխիթարել զոհվածների կամ վիրավորների հարազատներին:

Այսպիսով՝ ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդության լուծարումը ոչ թե առաջադիմություն է, այլ հոգևոր ճակատում ռազմավարական միտումնավոր կամ անգիտակից սխալ, որը խոցելի է դարձնում մեր զինվորի հոգևոր զրահը:

ՊՆ-ի՝ ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդության լուծարումից հետո բանակում հաստատվել է հոգևոր ծառայության նոր նախօրինակ, ըստ որի՝ գնդերեց հոգևորականները փոխարինվում են ՀՀ ԶՈՒ ԳՇ Բարոյահոգեբանական ապահովման (ԲՀԱ) վարչությանը ենթակա հաստիքային սպաներով: Երևույթը հասկանալու համար անհրաժեշտ է վերլուծել, թե իրականում ինչ փոփոխության է ենթարկվել Հայոց բանակում հոգևոր սպասավորությունը, և ինչ նորամուծություն է առաջարկվել ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդության դիմաց:

1. Եթե մինչ լուծարումը գնդերեցը բանակում կոչումով հոգևորական՝ քահանա կամ սարկավագ էր, ապա այսուհետ սպա է, որ բնավ կարող է հոգևորական չլինել: Դրանով դուռ է բացվում տարատեսակ եկեղեցատյաց և կրոնական բնույթ կրող տարրերի ներթափանցման համար:

2. Եթե մինչ լուծարումը գնդերեցը բանակում հոգևոր աստիճան ուներ, ապա այսուհետ նա բացառապես զինվորական է: Քահանաներ այլևս չեն լինի, իսկ սարկավագներին կտրելու են Մայր Եկեղեցու ենթակայությունից:

3. Եթե մինչ լուծարումը գնդերեցն ուներ երկակի ենթակայություն՝ Մայր Եկեղեցուն և ՊՆ-ին, ապա այսուհետ՝ միայն բանակին:

4. Եթե մինչ լուծարումը գնդերեցը կրում էր հոգևոր զգեստ, չէր կրում զենք, ապա այսուհետ պարտավոր է կրել զինվորական համազգեստ, անհրաժեշտության դեպքում՝ քայլել շարային քայլքով:

5. Եթե մինչ լուծարումը գնդերեցը հոգևոր հայր և Եկեղեցու սպասավոր էր, ապա այսուհետ՝ բարոյահոգեբանական մասնագետ:

6. Եթե մինչ լուծարումը գնդերեցը Եկեղեցու կողմից էր առաջադրվում, ապա այսուհետ նշանակվելու է ՊՆ-ի կողմից:

7. Եթե մինչ լուծարումը գնդերեցը միաժամանակ ենթակա էր զորամասի հրամանատարին և ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդին, ինչը նշանակում էր, որ հրամանատարը հակաեկեղեցական որոշումով չէր կարող նրան դնել անելանելի վիճակի մեջ, ապա այսուհետ այդ հակակշիռը վերանում է, և նա դառնում է հրաման կատարող անձ:

8. Դառնալով սպա՝ հոգևորականն այլևս չի կարող առարկել հրամանատարին, եթե վերջինս արձակի հոգեկորուստ կամ հակաեկեղեցական հրամաններ:

9. Հոգևորականն ստիպված է լինելու մասնակցել զինվորական վարժանքների, ինչը հեռացնում է նրան իր բուն հոգևոր առաքելությունից:

10. Գնդերեց հոգևորականների հիմնական առաքելությունը բանակում հոգեփրկչական էր, իսկ այսուհետ այդ ծառայությունը սահմանափակվելու է զուտ բարոյահոգեբանական դաստիարակությամբ, որն արդեն առկա էր ի դեմս ԲՀԱ սպաների ու սպա հոգեբանների ծառայության:

11. Հոգևորականի դերը հոգևոր հորից վերածվում է բարոյահոգեբանական աջակցի: Սա զրկում է զինվորին խոստովանության և հոգևոր խորհուրդների այն անկախ հարթակից, որը չէր վերահսկվում հրամանատարության կողմից: Զինվորն այլևս չի ունենալու հոգևոր հայր, որին կարող է խոստովանել և վստահել իր անձնական գաղտնիքները՝ առանց վախենալու այդ հարցերում հրամանատարության վերահսկողությունից:

12. Զինվորը բանակում կունենա ոչ թե հոգևոր հայր, այլ սպայական կոչումով «կրոնական աշխատող», որը պարտավոր է հնազանդվել ոչ թե Աստծուն և իր ուխտին, այլ վերադասի՝ սպայի հրամանին:

13. Զորամասերի և զինվորական հոսպիտալների եկեղեցիներն ու մատուռները փաստացի զրկվում են կանոնավոր հոգևոր սպասավորությունից՝ Պատարագներից, ժամերգություններից, զինվորական ու ռազմաբշժկական անձնակազմերին և բուժառուներին Ս. Հաղորդության բաշխումից, Ս. Մկրտության արարողություններից:

14. Բանակում այլևս մկրտություն անցկացնող հոգևորական չի լինի, որը կարևոր դեր ուներ հատկապես մարտական իրավիճակներում:

15. Հոգևոր սպասավորության կուռ համակարգից դուրս են մղվում 20 և ավելի տարվա փորձ ունեցող, պատերազմների թոհուբոհում թրծված գնդերեց հոգևորականներ:

16. Առանց Եկեղեցու՝ նոր «գնդերեցները» կարող են քարոզել Առաքելական Եկեղեցու դավանանքին հակասող դրույթներ, հակաեկեղեցական օրակարգեր՝ հրամանին չենթարկվելու վախից դրդված կամ հենց նման գաղափարների կրող լինելով:

17. Նորամուծ «գնդերեցը» լինելու է Եկեղեցու նվիրապետությունից կտրված, Աստծո խոսքը կրող նախկին բազմափորձ հոգևորականն իր տեղը զիջելու է պարզապես «հոգևոր կրթությամբ մասնագետի», որն առաջնորդվելու է վարչական հրահանգներով:

18. Պատերազմի արհավիրքների միջով անցած զինվորականին առաջարկվելու է հոգեբանական դասախոսություն, այնինչ նրան ավելի անհրաժեշտ են սփոփող Աստծո Սուրբ Հոգու մխիթարությունը, աղոթքը, հավատքի ամրությունը, հոգևոր խնամքը, խոստովանությունը, թողությունը հոգևորականի կողմից: Այս որոշմամբ՝ բանակից հեռացվել են հոգևորականներ, որոնք տասնամյակներ շարունակ Աստծո շնորհով հոգևոր բժշկություն են պարգևել զինծառայողին:

Այսքանից հետո եզրակացությունը թողնում եմ ընթերցողին՝ արդյո՞ք սա «բարեփոխում» է, թե՞ Եկեղեցու ինստիտուցիոնալ ներկայության վերացում բանակից: Հոգևորականը դադարում է լինել հոգևորական, Եկեղեցու հոգևոր պատվիրակը բանակում վերածվում է պետական կառավարելի պաշտոնյայի: Այլ կերպ ասած՝ Զինված ուժերը դուրս է բերվում Եկեղեցու հոգևոր ներգործության դաշտից: Կազմալուծված ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդության ծառայակիցների գնահատմամբ՝ սա ոչ թե բարեփոխում է, այլ Եկեղեցուն բանակից «վտարելու» և նորամուծ «գնդերեցներին» հրամկազմի կամակատար դարձնելու գործընթաց: Զինվորականացված «գնդերեցը» զրկվում է Աստծո և Եկեղեցու անունից ազատ խոսելու իրավունքից և դառնում հրամաններ կատարող:

Սամվել դպիր ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տ. Տրդատ քահանա ԳԵՎՈՐԳՅԱՆ
(նախկին գնդերեց)

Լինելության ուխտը

← էջ 6

Երբ Մարիամն ասաց. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ. Ա 38), նա կատարեց մի ընտրություն, որը փոխեց տիեզերքի ընթացքը: Նա ընտրեց լույսը՝ գիտակցելով, որ այդ լույսը տանելու է դեպի Գողգոթա: Հայ ժողովուրդն իր պատմական քառուղիներում՝ քրիստոնեության ընդունումից մինչև այսօր, հաղթահարել է հենց այս ծածկագիրը՝ գիտակցված «այո՛» ասելով իր ինքնությանը, նույնիսկ երբ դրա գինը եղել է խաչելությունը:

Սա հնազանդություն չէ պարտադրանքին, այլ ազատ կամքի դրսևորում: Ինչպես Քրիստոս Գեթսեմանիի պարտեզում ասաց. «Ոչ թե իմ կամքը, այլ քո՛նը թող լինի» (Ղուկ. ԻԲ 42), այնպես էլ հայը դարեր շարունակ իր կամքը ձուլել է աստվածային արդարությանը և ճշմարտությանը: Մեր «այո՛»-ն եղել է ստեղծարար ուժ. այն ծնել է մշակույթ, լեզու և պետականություն այնտեղ, որտեղ տիրում էին ավերն ու մահը: Սա այն քաջությունն է, որը ծնվում է խոնարհությունից՝ ընդունել սեփական ճակատագիրը և այն վերածել փրկության ճանապարհի: Այս ընտրությունն է մեզ դարձնում այն, ինչ կանք՝ ուխտի ժողովուրդ: Մենք չենք ընկրկել ցավի առջև, քանի որ մեր «այո՛»-ն միշտ ունեցել է հարության հույսը: Այս ազգային ծածկագիրը մեզ սովորեցրել է, որ իրական հզորությունը ոչ թե ուրիշին տիրելը, այլ սեփական ոգուն տիրապետելն է:

Ամփոփելով՝ կարող ենք պնդել, որ Աստվածամոր «այո»-ն հայոց հավաքական գիտակցության մեջ վերածվել է գոյաբանական հաստատման: Մենք ասել ենք «այո՛» մեր լեզվին, մեր հողին և մեր Տիրոջը՝ գիտակցելով բոլոր զրկանքները, բայց նաև տեսնելով այն երկնային պսակը, որ սպասում է համբերողներին: Հայ լինելը հենց այդ հավերժական «այո՛»-ին տեր լինելն է և այն ամեն օր վերահաստատելու սխրանքը, քանզի «Ով մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի» (Մատթ. Ժ 22):

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.06.2026 թ.
Տպաքանակը՝ 915